ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 սեպտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

136
(2802)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻՆ

Ինչո՞վ է զբաղված ՀՀ գլխավոր դատախազությունը, երբ Ադրբեջանը ահաբեկչություն իրականացնելու «հանցակազմով» ձերբակալում կամ կալանավորում է Արցախի հերոսամարտի գեներալների:

Սեպտեմբերի 27-ին Արցախը լքելու ճանապարհին Ադրբեջանը կալանավորեց Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանին: Երեկ Ադրբեջանի ԱԱԾ-ն հրապարակեց, թե ինչպես են ձերբակալել ՊԲ հրամանատարի տեղակալ Դավիթ Մանուկյանին, որը, Armlur.am-ի տեղեկություններով, եղել է Ռուբեն Վարդանյանի հետ նույն մեքենայում: Ձերբակալված է նաեւ Արցախի նախկին ՊԲ հրամանատար Լեւոն Մնացականյանը:

Նկատենք, որ 2 տարի առաջ Ազգային ժողովի ամբիոնից ԱԺ այն ժամանակ անկախ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ահազանգում էր սպասվող վտանգի մասին. «Ադրբեջանը միջազգային հետախուզում է հայտարարել մեր մի քանի հարյուր հայրենակիցների նկատմամբ (խոսվում է մոտ 380 մարդու մասին): Ցուցակում են Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, Արցախի պաշտպանության բանակի հրամանատարը, Արցախի ԱԳՆ Դավիթ Բաբայանը, ՀՀ նախկին ՊՆ Սեյրան Օհանյանը եւ այլք: Փոխարենը, մեր դատախազությունը միջազգային հետախուզում է հայտարարել ադրբեջանցի մի մարզական մեկնաբանի նկատմամբ»: Ավելին՝ Թագուհի Թովմասյանը բազմիցս նախկին դատախազին հարցադրումներ է արել, թե ՀՀ գլխավոր դատախազության կողմից ինչու որեւէ քայլ չի նախատեսվել Ադրբեջանի գեներալիտետի նկատմամբ միջազգային հետախուզում հայտարարելու մասով. «Ի վերջո, դժվար չէ ապացույցներ ներկայացնել, որ պատերազմի ընթացքում Ադրբեջանը թույլ է տվել տարբեր հանցագործություններ, իրականացրել է այնպիսի վայրագ գործողություններ, որոնք մերժելի են մի շարք կոնվենցիաներով ու օրենքներով: Հիմա մեր ձեռքերն ազատ են հետախուզելու եւ դժվարություններ ստեղծելու Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության համար, որպեսզի նրանք չկարողանան օգտվել տեղաշարժի իրենց իրավունքից:

Մենք պարտվել ենք պատերազմում, բայց դա չի նշանակում, որ իրավական հակակշիռներ չպետք է ստեղծել»,- ԱԺ ամբիոնից հայտարարել էր պատգամավորն ու դատախազությանը սթափվելու կոչ արել: Արդյունքում նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը լուռ հետեւեց ու որեւէ քայլ չիրականացրեց: Ներկայիս դատախազ Աննա Վարդապետյանը եւս որեւէ քայլ չի իրականացնում ու հանդիսատեսի նման հետեւում է, թե ինչպես են վարվում մեր ազգային հերոսների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ գլխավոր դատախազություն՝ հետաքրքրվելով, թե ինչով է զբաղված դատախազությունը, արդյոք որեւէ հակակշիռ քայլ արել է Ադրբեջանի գեներալիտետի, քաղաքական ղեկավարների նկատմամբ միջազգային հետախուզում հայտարարելու մասով: Արդյոք Աննա Վարդապետյանը մտադիր չէ՞ հետախուզում հայտարարելու գործընթաց եւ դժվարություններ ստեղծել Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության համար, որպեսզի նրանք չկարողանան օգտվել տեղաշարժի իրենց ազատությունից:

Ի պատասխան՝ Գլխավոր դատախազությունից հորդորեցին դիմել գրավոր: Կանենք:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռ ամիսներ առաջ բացահայտել էր, որ ՔՊ կուսակցության պատգամավոր Տրդատ Սարգսյանը 1 օրում երկու բնակարան է ձեռք բերել, հաջորդ օրը՝ ավտոտնակ: Սա տեղի է ունեցել այն դեպքում, երբ մինչ պատգամավոր դառնալը 100 դրամով երթեւեկում էր երթուղայիններով, ոչինչ չուներ, նույնիսկ՝ կայուն աշխատանք: Այդուհանդերձ, Վայոց ձորի մարզպետ, ապա ԱԺ ՔՊ-ական պատգամավոր դարձած Տրդատ Սարգսյանը 1 օրում 2 բնակարան է գնել: Հիփոթեքով գնելու դեպքում եւս սա խնդրահարույց է. ինչպե՞ս է մարում 2 տների, 1 ավտոտնակի եւ մյուս վարկերը, հասցնում ապրել ու շքեղություններից օգտվել: Մեր այդ հրապարակումից հետո որեւէ գործընթաց իշխանական պատգամավորի նկատմամբ չէր սկսվել, կարծես արտասովոր ոչինչ չկա, եւ միջին վիճակագրական ՀՀ քաղաքացին կարող է իրեն թույլ տալ 1 օրում՝ երկու տուն, հաջորդ օրն էլ ավտոտնակ գնել: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հետաքրքրվել Գլխավոր դատախազությունից, թե արդյոք տիկին Աննա Վարդապետյանին այս փաստը կասկածի տեղիք չի տվել: Առհասարակ, տեղա՞ք է դատախազը իշխանավորների ցոփ ու շվայտ կյանքի մանրամասներից, եւ եթե տեղյակ է, ի՞նչ է անում: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի հարցման՝ դատախազությունից հայտնել են. ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում իրականացվող ուսումնասիրություններ սկսելու հանգամանքը, դրանց հիմքերը, ընթացքի վերաբերյալ եւ դրանց արդյունքում ստացված տվյալներն ամբողջությամբ գաղտնի են եւ ենթակա են տրամադրման այլ անձանց՝ միայն ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից: Հետեւաբար, որոշակի անձանց պատկանող գույքերի նկատմամբ ուսումնասիրության առկայության առնչությամբ տվյալներ տրամադրվել չեն կարող»: Թե դատախազությունը, «որոշակի անձ» ասելով, ում նկատի ունի, պարզ է, բայց անհասկանալի է, թե ինչու է դատախազը ակտիվ ապօրինի ծագման գույք որոնում միայն Նիկոլ Փաշինյանին ընդդիմացողների շրջանում, այլ ոչ ամենուր, ինչպես պարտավոր է անել՝ լինելով ՀՀ գլխավոր դատախազ:

Ազգային Ժողովի ներսում փակցված կարող եք տեսնել ցուցանակ, որի վրա գրված է. «Խնայե՛ք ջուրը, Save Water», «Խնայե՛ք էլեկտրաէներգիան, Save Energy», «Պահպանե՛ք անվտանգության եւ հակահրդեհային կանոնները, Keep safety and Fire-fighting rules»: «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, թե պետական որ կառույցն ինչպես է օգտագործում խմելու քաղցրահամ ջուրը: Այսպիսով, խմելու ջուր խնայելու մասին քարոզ անող Ազգային Ժողովը 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի 28-ը 4 մլն 125 հազար դրամ արժողությամբ «ըմպելու ջուր» է գնել: Գնումը կատարվել է «Ագրոսյան» ՍՊԸ-ից: Ընկերության դեմ հարուցվել է վարչական վարույթ, եւ գանձման ենթակա գումարը կազմել է 1 մլն 556 հազար դրամ: Վարչական ակտ ընդունելու մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար եւ որեւէ բացատրություն չի տվել:

Հաջորդ շաբաթ իշխանական պատգամավորները կհավաքվեն. «Քաղաքացիական պայմանագիր»-ը երկուշաբթի երեկոյան խմբակցության նիստ կանի: Ինչպես իշխանական աղբյուրներն են փոխանցում, նիստը հերթականներից չի լինելու: Կարեւոր հարցեր կան քննարկելու, որոնք միայն ԱԺ նստաշրջանին չեն առնչվում, ուստի ՔՊ խմբակցության ղեկավարությունն ասել է, որ բոլոր պատգամավորները ներկա լինեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ականները քննարկելու են իրենց առաջիկա անելիքները, քանի որ սպասվում է, որ հաջորդ շաբաթ մեկնարկելիք ԱԺ նստաշրջանը լարված է անցնելու՝ Արցախում ստեղծված աղետալի իրավիճակով պայմանավորված: Իշխանականների համար ոչ հաճելի ելույթներ եւ հարցեր են հնչելու ԱԺ-ում, ուստի պետք է նախապես պատրաստվեն, որպեսզի ամեն ինչի պատասխանն ունենան ու կարողանան տակից դուրս գալ այդ հարցերի, թեեւ նախնական որոշում կա արդեն՝ ամեն ինչ բարդել նախկիններ եւ ռուսներ վրա: Հաջորդ շաբաթ՝ չորեքշաբթի օրը, խորհրդարան է գնալու նաեւ Նիկոլ Փաշինյանը: ՔՊ-ականները նաեւ պետք է իրար մեջ բաժանումներ անեն, թե ով ինչ հարց է այդ օրը տալու Նիկոլ Փաշինյանին, որպեսզի նա պատրաստվի:

ԶՐՈՒՅՑ

# ԻՆՉՈ՞Ւ ՀԵՏԱՁԳՎԵՑԻՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐԸ

**Սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ սանձազերծված ադրբեջանական նոր ագրեսիայի ֆոնին Երեւանում մասնաբային ցույցեր էին սկսվել: Ընդդիմադիրները պահանջում էին գործող իշխանությունների հրաժարականը:**

Համաժողովրդական շարժումը համակարգելու համար ազգային կոմիտե է ձեւավորել, որում ընդգրկված են «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը, «ՀայաՔվե» նախաձեռնության համահիմնադիր Ավետիք Չալաբյանը, «Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանը:

Ազգային կոմիտեն սեպտեմբերի 26-ին հայտարարեց, որ անորոշ ժամանակով հետաձգում են հանրահավաքները, սակայն այսօր հայտնի դարձավ, որ վերսկսում են փողոցային պայքարը եւ սեպտեմբերի 30-ին հանրահավաք են կրկին հրավիրում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է «Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանյանի հետ:

**-Պարոն Թեւանյան, ինչու՞ հետաձգվեցին հանրահավաքները, ո՞րն էր պատճառը:**

-Ազգային կոմիտեն է այդպես որոշել:

**-Այսինքն՝ միանձնյա որոշում չի՞ եղել, կոմիտեի բոլոր անդամները համամի՞տ են եղել դրա հետ:**

-Այո, տարբեր տեսակետներ են հնչել: Հիմնական պատճառն էլ արցախահայության տարհանման հետ կապված հարցերն են եղել, այդ հարցերով ենք զբաղված:

**-Իսկ այս օրերին կոմիտեի անդամներն ինչո՞վ են զբաղված, որքանո՞վ են ներգրավված տարհանված արցախահայության տեղավորման աշխատանքներում:**

-Ով ինչ կարողանում է անել, անում է: Մեկը օգնում է տուն գտնել արցախցիների համար, մեկը օգնություն է հասցնում նրանց. ով ինչով կարողանում, օգնում է: Բոլորս էլ մտահոգված ենք ու անհանգստացած, օրինակ՝ մենք գրասենյակ ենք տրամադրել, որպեսզի աշխատակիցները կապ հաստատեն Հայաստան տեղափոխված արցախցիների հետ եւ հասկանան՝ ով ուր է եւ ինչի կարիք ունի:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԿՈՆՍԵՆՍՈՒՍ ՉԻ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ

**Արդեն շուրջ երկու շաբաթ է՝ Երեւանը քաղաքապետ չունի:**

Սեպտեմբերի 17-ին կայացած ավագանու ընտրության արդյունքում անցողիկ շեմը հաղթահարել էր հինգ քաղաքական ուժ, սակայն նրանցից որեւէ մեկին չէր հաջողվել 50 տոկոս եւ ավելի ձայն հավաքել, որպեսզի կարողանա միաձայն քաղաքապետ ընտրել:

Ընդդիմադիր թեւից հանդիսացող «Ազգային առաջընթաց», «Հանրային ձայն» կուսակցությունները եւ «Մայր Հայաստան» դաշինքը նախ հայտարարեցին, որ պետք է ամեն ինչ անեն, որպեսզի բացառեն ՔՊ-ի վերարտադրվելը. քաղաքական ուժերն անգամ պատրաստ էին համաձայնության գալ Հայկ Մարությանի թեկնածության շուրջ:

Բայց, կարծես թե, քաղաքական ուժերի սկզբունքները եւ նախապայմանները թույլ չեն տալիս կոնսենսուսի գալ:

Հոկտեմբերի 10-ին պետք է տեղի ունենա նորընտիր ավագանու առաջին նիստը, որի ընթացքում ավագանին պետք է քաղաքապետ ընտրի:

«Ազգային առաջընթաց» կուսակցության քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանը հայտարարել էր, որ իրենք բոյկոտելու են Երեւանի ավագանու անդրանիկ նիստը եւ գնում են Երեւանի ավագանու նոր ընտրությունների, քանի որ ընդդիմադիր ուժերի ձայները չեն բավականացնում ընդդիմադիր քաղաքապետ ընտրելու համար: Պատճառն այն է, որ «Հանրային ձայն» կուսակցության ավագանու երկու անդամ ինքնաբացարկի դիմում չի ներկայացրել. նրանցից մեկը՝ Արտակ Գալստյանը, գտնվում է կալանքի տակ, իսկ Տիգրան Ուրիխանյանը՝ հետախուզման մեջ, հետեւապես ավագանիում այս կուսակցությունը կունենա 5 անդամ, որի պարագայում ընդդիմությունը չի կարողանա քաղաքապետ ընտրել, քանի որ ընդդիմադիր քաղաքապետ ընտրելու համար պահանջվող 33 ձայնից երկուսն այլեւս չկան:

«Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը եւս հայտարարել է, որ ամբողջ կազմով չի ներկայանա Երեւանի ավագանու առաջին նիստին:

«Հանրային ձայն» կուսակցության ղեկավար Վարդան Ղուկասյանը եւս հայտարարել է, որ պատրաստ է միանալ «Ազգային առաջընթաց» կուսակցության եւ «Մայր Հայաստան» դաշինքի՝ Երեւանի ավագանու առաջին նիստը բոյկոտելու որոշմանը՝ պայմանով, որ իր հետ պայմանագիր կնքեն մայրաքաղաքում ամեն երրորդ պաշտոնն իր ներկայացրած ուժին հանձնելու մասին:

Մինչ ընդդիմադիր հանդիսացող քաղաքական ուժերը հեռակա «լեզվակռիվ» են տալիս, իշխող ՔՊ-ն եվ «Հանրապետություն» կուսակցությունը լուռ հետեւում են գործընթացին: Ընդդիմադիր ուժերը վստահություն են հայտնում, որ «Հանրապետություն»-ը կոալիցիայի է գնալու իշխող ուժի հետ:

Այսպիսով, եթե «Հանրային ձայն» կուսակցության անդամներից ներկայանան նիստին, ապա քվորում կապահովի: Առաջին քվեարկությամբ Ավինյանը չի ստանա 33 ձայն, բայց նիստը կկայանա, երկրորդ քվեարկության ժամանակ նա կանցնի ձայների մեծամասնությամբ: Եթե 2 անգամ քվորում չլինի, եւ քաղաքապետ չընտրվի, ապա պարտավոր են նոր ընտրություններ հայտարարել:

## ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՉԵՆ ՀՈՒԶՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԵՐԸ



Սեպտեմբերի 19-ից հետո ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը կորել է ասպարեզից: Նրան անգամ չի անհանգստացնում Ադրբեջանի կողմից Արցախի վրա հարձակումը, այդքան զոհերը, բռնի տեղահանությունն ու Արցախի գոյության դադարումը: Համենայնդեպս, ՀՀ նախագահի աշխատակազմի կայքում առկա տվյալները վկայում են այն մասին, որ Խաչատուրյանին այդ հարցերը չեն հուզում: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ նախագահի պաշտոնական կայքն ուսումնասիրելիս պարզեց, որ նրա գործունեության վերաբերյալ վերջին տեղեկությունը եղել է սեպտեմբերի 21-ին, երբ շնորհավորել է ՀՀ անկախության տոնը: Դրանից հետո նախագահը լռել է մինչեւ սեպտեմբերի 26-ը: Այս օրն էլ նրան դեսպան է հավատարմագրեր հանձնել, այցելել է Չինաստանի դեսպանատուն, երեկ էլ շնորհավորել է Չինաստանի նախագահին: Այսինքն՝ Արցախում իրավիճակը նրան չի հուզում: Պաշտոնական կայքում որեւէ խոսք չկա հայ ազգի համար ողբերգական իրադարձությունների մասին:

## ՈՐՏԵ՞Ղ Է ԲԱԲԱՅԱՆԸ

Սեպտեմբերի 28-ի առավոտյան Արցախի արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանը հայտնեց, թե գնում է Շուշի:

«Ադրբեջանական կողմը պահանջել է իմ ժամանումը Բաքու՝ համապատասխան հետաքննության համար. որոշեցի այսօր Ստեփանակերտից մեկնել Շուշի», - գրել էր նա:

Եվ, ահա, նրա այս գրառումից անցել է 24 ժամ, եւ դեռեւս հայտնի չէ, թե որտեղ է Բաբայանը: Վերջինիս ճանաչողները տարակուսում են՝ Դավիթ Բաբայանը հանձնվող տեսակ չէր, եւ այլ վարկածներ են քննարկում:

Մյուս կողմից էլ տարօրինակ է, որ մինչ այժմ ադրբեջանական լրատվամիջոցները լռում են եւ Բաբայանի՝ Ադրբեջան հանձնվելու մասին ոչինչ չեն հայտնում: Իսկ, ահա, Ռուբեն Վարդանյանի պարագայում տեղեկությունը տարածվեց միանգամից: Եվ հիմա հարց է առաջանում՝ որտե՞ղ է Դավիթ Բաբայանը, եւ ի՞նչ է եղել նրա հետ:

## ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ադրբեջանը Հայաստանին մշտապես տարբեր ձեւերով հարձակումներ է ենթարկել. «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Դուբլինում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների խորհրդարանների նախագահների եվրոպական համաժողովի նիստին այս մասին հայտարարել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Իր իսկ խոսքերով՝ Ադրբեջանի նախագահ Ալիեւը մտորում էր, թե քանի ազդակ էր Հայաստանին պետք գործի էությունը հասկանալու համար: «2021 եւ 2022 թվականների սահմանային գործողությունները բավարար չեն եղել»,- մտածում էր նա: Նա նաեւ նշել է, որ Հայաստանը կարծես թե չի հասկացել մոտ 10 ամիս առաջ Լաչինի միջանցքի՝ իր կողմից էթնիկ զտումների արշավի առաջին փուլի փակումը: Սեպտեմբերի 19-ին սկսվեց հաջորդ մասը:

Չնայած ռուս խաղաղապահների ներկայությանը՝ Ադրբեջանը հերթական լայնածավալ ռազմական հարձակումն է սանձազերծել Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ: Հարյուրավոր մարդիկ վիրավորվել եւ սպանվել են, տասնյակ հազարավոր մարդիկ դարձել են բռնի տեղահանվածներ: Նրանք մնում են դրսում՝ առանց սննդի, բժշկական օգնության եւ գոյատեւման այլ միջոցների: Մինչ ես խոսում եմ Ադրբեջանի էթնիկ զտման ծրագրից, շարունակվում է հայերի զանգվածային արտագաղթը Լեռնային Ղարաբաղից: Անհավանական է, որ այսօր՝ 21-րդ դարում, նման իրադարձություններ են տեղի ունենում աշխարհի տարբեր անկյուններում:

Իր գործողություններով, որոնք ի չիք են դարձնում Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության հաստատմանն ուղղված միջազգային ջանքերը, Ադրբեջանը կասկածի տակ է դրել Եվրոպայի խորհրդի անդամ լինելու իր պիտանիությունը: Եվրոպայի խորհուրդը պետք է ակտիվորեն մասնակցի մարդու իրավունքների պաշտպանությանն առավել բարդ հակամարտություններում»,- ընդգծել է Սիմոնյանը:

Ըստ ԱԺ նախագահի՝ Եվրոպայի խորհրդի աշխարհագրական ընդգրկման սահմաններում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում, յուրաքանչյուր մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է առաջնահերթություն լինի Եվրոպայի խորհրդի համար:

ԱՇԽԱՐՀ

# 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՓՈԽԵՑ ԻՐԱՎԻՃԱԿԸ

**«2020 թվականի 44-օրյա պատերազմը փոխել է իրավիճակը տարածաշրջանում»,- կարծում է Կարնեգի եվրոպական կենտրոնի փորձագետ Թոմաս Դե Վաալը:**

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նա հայտնել է, որ Թուրքիան լիարժեք ռազմական աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին, ինչը վճռորոշ նշանակություն է ունեցել հայերի նկատմամբ հաղթանակի համար: Ռուս խաղաղապահները տեղակայվել են Լեռնային Ղարաբաղում: ԵԱՀԿ ձեւաչափը փլուզվեց, եւ Արեւմուտքը հայտնվեց լուսանցքում:

«Այս համատեքստում հակամարտությունը միջամտեց մերձավորարեւելյան ավելի լայն դինամիկային: Իրանը սկսեց ավելի սերտորեն աջակցել Հայաստանին, քանի որ մտահոգված էր, որ Ադրբեջանն ու Թուրքիան լիովին իրենց վերահոսկողության տակ կվերցնեն իր հյուսիսային սահմանը: Իսրայելն այժմ աջակցում է Ադրբեջանին, հնարավոր է՝ իրանական գործոնի պատճառով: Բացի այդ, Պակիստանը զենք է մատակարարում Ադրբեջանին, իսկ Հնդկաստանը՝ Հայաստանին»,- նշում է նա:

Փորձագետի խոսքով՝ Ադրբեջանը միշտ կարողացել է մանեւրել Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ՝ յուրաքանչյուրին ասելով, որ ինքը օգտակար գործընկեր է, ակնհայտորեն՝ տարբեր պատճառներով. «Ամենալկտին այն էր, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը ակնհայտորեն մինչեւ գործի անցնելը վստահեցրել է արեւմտյան գործընկերներին, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին եւ Եվրոպական խորհրդի նախագահ Չարլզ Միշելին, որ ուժ չի կիրառի, եւ, ամեն դեպքում, արեց դա: Ակնհայտորեն, սա կողմնակի գործարք էր Մոսկվայի հետ: Ռուս խաղաղապահները նահանջեցին, Մոսկվան չդատապարտեց հարձակումը, իսկ Ադրբեջանն արագ հաղթեց Լեռնային Ղարաբաղին: Այնուհետեւ ռուսները միջամտեցին հրադադարի բանակցություններին, ինչը փաստացի նշանակում էր հայկական կողմի ամբողջական հանձնում այս տարածքում: Ադրբեջանական կողմի համար դա ջախջախիչ հաղթանակ էր, բայց նրանք ստիպված կլինեն կրել Արեւմուտքից դեպի Ռուսաստան կտրուկ շրջվելու հետեւանքները:

Հաջորդ հարցը հենց Հայաստանն է: Ռուսները գրեթե բացահայտորեն կոչ են անում հեռացնել վարչապետ Նիկոլ Փաշինյանին նրա չափազանց արեւմտամետ դիրքորոշման համար: Ադրբեջանը, Ռուսաստանը եւ Թուրքիան, ըստ երեւույթին, ունեն համատեղ ծրագիր՝ ստիպելու Հայաստանին ընդունել Հայաստանի տարածքով դեպի ադրբեջանական անկլավ՝ Նախիջեւան տանող ճանապարհային եւ երկաթուղային երթուղու իրենց պայմանները՝ հայկական նվազագույն վերահսկողությամբ եւ ռուս սահմանապահներով: Եթե Հայաստանը չհամաձայնի դրան, ապա ուժի կիրառման քողարկված սպառնալիքներ կլինեն: Սա հակամարտությունների հաջորդ պոտենցիալ սահմանն է, որի հետ պետք է առնչվեն արեւմտյան կառավարությունները: Հանկարծ Արեւմուտքը դարձավ Հայաստանի վերջին պաշտպանը, իսկ Իրանը, ճակատագրի հեգնանքով, պահեստային խաղացողն է»:

Նրա խոսքով՝ Հայաստանը դեռ երկար ժամանակ շփոթության մեջ է լինելու. «Լեռնային Ղարաբաղի կորուստը հայերի համար ամենամեծ պարտությունն ու տրավման է՝ 1920 թվականին թուրքերի կողմից Կարսի գրավումից ի վեր: Հավանաբար, սա շատ ավելին է: Ինչպես արդեն ասացի, կլինեն շատ մարդիկ, որոնք կփորձեն ազատվել Փաշինյանից: Հուսով եմ, որ սա կլինի միասնության ժամանակ, այլ ոչ թե եղբայրասպան փոխադարձ մեղադրանքների»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԼԱՐՈՒՄ ՉԿԱ

Սահմանային իրավիճակն այս պահին հարաբերականորեն կայուն է:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Հայաստանի պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը խորհրդարանում լրագրողների հետ ճեպազրույցում:

«Այս պահին ՀՀ սահմանամերձ հատվածներում վիճակը հարաբերականորեն կայուն է: ՊՆ-ն ուշիուշով հետեւում է իրավիճակի դինամիկայի փոփոխությանը: Որեւէ փոփոխության դեպքում անմիջապես կիրազեկենք հանրությանը»,-ասաց Սարգսյանը:

Անդրադառնալով հարցին, թե ադրբեջանական զորքերի կուտակումները որ ուղղություններով են՝ փոխնախարարը շատ մանրամասներ չբացեց՝ խնդրելով բավարարվել վերջին շրջանում հրապարակված տվյալներով:

Նա, սակայն, նշեց. «Չպետք է մոռանանք, որ Ադրբեջանի հետ ամբողջ սահմանագծով մենք սահմանային գոտում ենք հայտնվել: Եվ եթե կուտակումներ լինում են, ապա դա վերաբերում է բոլոր հատվածներին՝ մի տեղ ավելի, մի տեղ պակաս, մի տեղ մի զինատեսակ ավելի, մի տեղ մի զինատեսակ պակաս: Բայց կարեւորն այս պահին սահմանային իրավիճակը հարաբերականորեն կայուն է, եւ լարման միտում գոնե այս պահին չի նկատվում»:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիայի ազգային պաշտպանության նախարար Յաշար Գյուլերը մամուլ ասուլիսի ժամանակ հայտնել է. «Հայաստանի կողմից իր խոստումների կատարումը եւ, մասնավորապես, Զանգեզուրի միջանցքի բացումը, հստակ արդյունքի վրա հիմնված բանակցությունների շարունակությունը կայունության հաստատման միակ ճանապարհն է»:

Նրա խոսքով՝ չնայած այն հանգամանքին, որ 44-օրյա պատերազմից հետո ստորագրվել է զինադադարի պայմանագիր, Հայաստանը չի կատարել անհրաժեշտ պայմանները. «Մենք ուշադրությամբ հետեւում ենք կողմերի (Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների) հանդիպմանը, որը տեղի կունենա Իսպանիայում առաջիկա օրերին:

Ինչպես միշտ, մենք աջակցում ենք մեր եղբայրական Ադրբեջանին՝ առաջնորդվելով «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգով:

## ՋԻՆՎՈՐՆԵՐԸ ԿՆԵՐԳՐԱՎՎԵ՞Ն

Երեկ խորհրդարանում ՀՀ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը մի քանի հարցերի է պատասխանել: Նա լրագրողներին ասել է, թե Հայաստանի պաշտպանության նախարարության համար ցանկալի կլինի, որ Արցախից բռնի տեղահանված անձինք ծառայության ընդունվեն ՊՆ-ում:

«Մեզ համար շատ ցանկալի կլինի, որ Պաշտպանության բանակի զինծառայողները ծառայության ընդունվեն ՀՀ ՊՆ-ում, որովհետեւ իրենք մեր հայրենակիցներն են, եւ իրենց փորձը, զինվորական գիտելիքները ծառայեցնեն ՀՀ զինված ուժերին»,-ասաց Սարգսյանը:

Նրա խոսքով՝ այն զինծառայողները, որոնք ցանկություն կունենան ընդգրկվել ՀՀ ԶՈՒ-ում ծառայության, Հայաստանի ՊՆ-ն ամեն ինչ կանի, որ այդ հնարավորությունը ստանան:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԳՈՐԾԸ

**«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդու կալանավորման գործընթացը ՀՀ քննչական կոմիտեում բավականին ուշագրավ ու աղմկահարույց իրադարձություններով է իրականացվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ Լևոն Քոչարյանին ձերբակալում են ու տանում քննչական, Կենտրոնի քննիչին ասում են՝ հանրային բեռական հետաքննում հարուցելու մասին միջնորդություն ներկայացնել դատախազին: Դրանից հետո պետք է միջնորդություն ներկայացվեր դատարան՝ նրա նկատմամբ խափանման միջոց կալանավորում ընտրելու համար, սակայն Կենտրոնի քննիչը հրաժարվում է՝ նշելով, որ հանցակազմ չկա Լևոն Քոչարյանի արարքում, եւ ինչպես այդ պայմաններում նման միջնորդություն անի: Եվ, ահա, մեզ հասած լուրերի համաձայն՝ քննիչին ասում են՝ դիմում գրի՛ր ու ազատվի՛ր, ինչն էլ քննիչն անում է ու, սեփական դիմումի համաձայն, ազատվում աշխատանքից:**

Այսքանով ամեն ինչ չի ավարտվում? գործը փոխանցում են մեկ այլ քննիչի՝ կրկին Կենտրոնի քննչական բաժնից: Երկրորդ քննիչը միջնորդությունը տանում է դատարան, որ Լեւոն Քոչարյանին կալանավորեն, սակայն դատարանում դռնփակ նիստում տնային կալանքի հարց է բարձրացվում, որտեղ Քննչական կոմիտեի քննիչը չի առարկում տնային կալանքի ներկայացման հարցում: Այս ամենի մասին հայտնի է դառնում քաղաքական իշխանությանը, ու երկրորդ քննիչն էլ, որ չի առարկել տնային կալանքի կիրառմանը, սեփական դիմումի համաձայն, ազատվում է: Ստացվում է, որ Ռոբերտ Քոչարյանի որդու կալանավորման գործընթացը չցանկացող երկու քննիչի ազատում են աշխատանքից:

Հարց է ծագում՝ դռնփակ դատական նիստի մասին ինչպե՞ս են տեղյակ եղել վերեւներում, ինչպե՞ս են դատարանում տեղի ունեցող իրադարձությունները փոխանցվել քննիչի վերադասներին. եթե քննիչը չէ, ուրեմն դատավորն է տեղեկությունը փոխանցել քաղաքական ղեկավարությանը, ինչի արդյունքում էլ քննիչին ազատել են:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 25-ին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Լեւոն Քոչարյանը, 1 ամսով կալանավորվել է, իսկ, ահա, կալանքի որոշումը կայացրել է դատավոր Մասիս Մելքոնյանը: Նշենք, որ նա բերման էր ենթարկվել, ապա կալանավորվել ոստիկանների նկատմամբ բռնություն գործադրելու համար:

Նշենք, որ դատավոր Մելքոնյանն Արամ Զավենի Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցության ցուցակով 2021թ. խորհրդարանական արտահերթ ընտրություններին էր մասնակցում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Ի պատասխան մեր տեղեկությունների՝ այնտեղից պաշտոնապես հայտնեցին. «Որեւէ քննիչի նկատմամբ առհասարակ որեւէ ճնշում չի գործադրվել ու չէր կարող գործադրվել: Դա պարզունակ մանիպուլյացիա է: Իրականության հետ աղերս չունի նաեւ տեղեկատվությունը, որ տվյալ վարույթով դատարան միջնորդություն ներկայացրած եւ դրա քննարկմանը մասնակցած քննիչն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, այն էլ՝ ստիպողաբար: Վերջինս շարունակում է իր ծառայությունը: Քննչական կոմիտեն մեծ համակարգ է» եւ Կոմիտեից ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անձնական դիմումի համաձայն պաշտոնից ազատվելը նույնքան բնական երեւույթ է, որքան այդ պաշտոնների համալրումը»:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՈՒՇԱԳՐԱՎ

# ՓՈԽՏՆՕՐԵՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ

**Հակակոռուպցիոն դատարանը, համաձայնեցման վարույթի կիրառմամբ, 2023 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով՝ «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ Ա.Ա.-ին դատապարտել է 5 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել. սահմանվել է 2 տարի ժամկետով փորձաշրջան: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է դատախազությունից:**

Հիշեցնենք, որ դատախազը 2023 թվականի հունիսի 27-ին հաստատել էր մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Քննչական կոմիտեում քննված վարույթով տվյալներ էին ձեռք բերվել այն մասին, որ «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ Ա.Ա-ն ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Ն.Ա.-ի եւ տնօրենի մասնագիտացված կրթական աշակցությունների գծով տեղակալ Լ.Մ.-ի ու Լ.Ս.-ի օժանդակությամբ 2015 թվականի սեպտեմբերի 10-ին ՊՈԱԿ-ի տնօրենի անունից կազմել եւ ստորագրել էր Լ.Ս.-ին աշխատանքի ընդունելու վերաբերյալ հրաման ու աշխատանքային պայմանագիր, իսկ 2018 թվականի հունվարի 12-ին՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ հրաման:

Վերոնշյալ ժամանակահատվածներում Լ.Ս.-ն աշխատանքի չէր հաճախել, սակայն աշխատակիցների ամենամսյա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում ներառվել էին Լ.Ս.-ի կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ կեղծ տեղեկություններ: Արդյունքում ՊՈԱԿ-ի բյուջեից Լ.Ս.-ի անվամբ դուրս էր գրվել եւ յուրացման եղանակով հափշտակվել 2 մլն 797 հազար 529 դրամ:

Բացի այդ, ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ձեռք էին բերվել 1 մլն 445 հազար 307 դրամի ամանորյա միջոցառումների համար նախատեսված նվերներ եւ սննդամթերք, 2 մլն 325 հազար 500 դրամի՝ տնտեսական եւ կենցաղային ապրանքներ, սակայն Ա.Ա.-ն ձեռք բերված ապրանքները ՊՈԱԿ-ի պահեստ չէր մուտքագրել եւ յուրացման եղանակով հափշտակել էր:

2023 թվականի հունիսի 2-ին դատախազի կողմից որոշում էր կայացվել Ա.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ խոշոր չափերով ուրիշի գույքը յուրացնելը կամ վատնելը), 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելը):

Նախաքննության ընթացքում Ա.Ա.-ի կողմից ՊՈԱԿ-ին պատճառված 8 մլն 613 հազար 836 դրամ վնասն ամբողջությամբ վերականգնվել էր:

ԿԱՐԵՎՈՐ

## ՎԻՃԱԿԸ ՎԱՏԱՑԱՎ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի առողջական վիճակը կրկին վատացել է: Նա երեկ նշանակված դատական նիստին չի ներկայացել:

Ինչպես հայտնի է, հունվարի 18-ին Գագիկ Խաչատրյանին դատարանը թույլատրել էր մեկնել արտերկիր բուժման նպատակով: Նա 2023 թվականի հունվարի 20-ից մինչեւ փետրվարի 10-ը բացակայել էր երկրից, եւ չնայած մեղադրող դատախազը դեմ էր՝ մտավախություն հայտնելով, որ Խաչատրյանը Հայաստան չի վերադառնա, այնուամենայնիվ, Խաչատրյանը գնաց եւ հետ եկավ: Ինչպես հայտնի է, Գագիկ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրված միլիոնավոր դոլարների չարաշահման, կաշառք վերցնելու եւ փողերի լվացման համար: Խոսքը 41 միլիոն դոլարի մասին է: Գլխավոր դատախազությունը Խաչատրյանին մեղադրում է նաեւ ապօրինի ճանապարհով հարստանալու համար: Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 20-ից ավելի անձանցից բռնագանձման ենթակա է 210 անշարժ գույք, որից 60-ը՝Երեւան քաղաքում: Բացի այդ, դատախազությունը պահանջում է բռնագանձել 14 տրանսպորտային միջոց, մասնակցություն իրավաբանական անձ հանդիսացող 33 կազմակերպությունում, նաեւ ավելի քան 40 միլիարդ դրամ:

## ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՎԵՑ

Սեպտեբերի 21-ին Երեւանում իրականացվող ակցիաների ժամանակ դաժանաբար ծեծի էր ենթարկվել ՀՀ ոստիկանության զորքերի 1033 զորամասի նախկին հրամանատար, գնդապետ Գուրգեն Գրիգորյանի որդին:

Նկատենք, որ վերջինիս դաժանաբար ծեծի ենթարկած ոչ մի ոստիկան պատասխանատվության չի ենթարկվել, իսկ, ահա, ոստիկանության գնդապետի որդուն մի քանի ժամ պահել են ոստիկանությունում եւ վարչական պատասխանատվության մասով որոշում են կայացրել: Հարց է առաջանում՝ իսկ ո՞վ պետք է պատասխան տա նրան ծեծելու համար:

## ՎՐԱԵՐԹ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Սեպտեմբերի 28-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Երեւան-Մեղրի ավտոճանապարհին՝ ժողովրդին հայտնի Գետափ գյուղի խաչմերուկ չհասած՝ «Ֆլեշ» բենզալցակայանի մոտ, Opel մակնիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել հետիոտնի: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հետիոտնը տեղում մահացել է, վարորդը փախուստի չի դիմել, փորձել է օգնություն ցուցաբերել:

Դեպքի փաստով Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վարորդի եւ մահացածի ինքնությունը: Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվում է ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՑԱԾՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տավուշի բազմաթիվ ֆերմերներ դժգոհում են, որ այս տարի աշնանացան ցորենի բերքատվությունը ցածր է եղել՝ ասելով, որ պատճառը պետական աջակցությամբ ձեռք բերված հացահատիկի ցածր որակն էր: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե պետական աջակցությամբ մարզի համայնքներին տրված աշնանացան ցորենի բերքատվությունը որքան է եղել: Մարզպետի պատասխանում գրված է. «2022 թվականին պետության կողմից մարզի հողօգտագործողներին աշնանացան ցորենի սերմացու չի հատկացվել, սակայն ՀՀ կառավարության 11 օգոստոսի 2022 թվականի N 1313L որոշմամբ իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիր», որի շրջանակներում 1 հա-ի հաշվով յուրաքանչյուր շահառուի փոխհատուցվել է հավաստագրված էլիտային կամ առաջին վերարտադրության սերմերով ցանքի դեպքում 120,0 հազար դրամ (սերմի, պարարտանյութի եւ դիզելային վառելիքի ձեռքերման ծախսերի հաշվով), չհավաստագրված սերմերով ցանքի դեպքում՝ 70,0 հազար դրամ (միայն պարարտանյութի եւ դիզելային վառելիքի ձեռք բերման ծախսերի հաշվով): Սերմացուն հողօգտագործողը ձեռք է բերել անմիջապես արտադրողներից, մատարակարներից կամ օգտագործել է իր ունեցած սերմացուն: Աշնանացան ցորենի միջին բերքատվության ցուցանիշը կներկայացվի ՀՀ վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի եւ միջին բերքատվության մասին ամփոփ տարեկան հաշվետվությունը կազմելուց հետո»:

## ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔՆ ՈՒ ՍԵԼԱՎԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը սեպտեմբերի 5-ին որոշում է ընդունել մարզպետարանի շենքի դահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերումն իրականացնել մեկ անձից: Սեպտեմբերին Տավուշի մարզպետարանի դահլիճը նորոգելու ի՞նչ անհրաժեշտություն է առաջացել, ո՞ր կազմակերպությունն է այն նորոգում, ինչքա՞ն գումար է հատկացվել դրա համար: «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցադրմանը մարզպետարանից պատասխանել են, որ այս տարվա հորդառատ անձրեւների հետեւանքով Տավուշի մարզպետի աշխատակազմի շենքի դահլիճային մասնաշենք են մուտք գործել մեծ քանակությամբ անձրեւաջրեր՝ փչացնելով դահլիճային մասի գրեթե ամբողջ մակերեսի մանրահատակը: Վերականգնման աշխատանքների համար հատկացվել է մեկ միլիոն 200 հազար դրամ, աշխատանքներն իրականացման փուլում են: Մարզպետարանից չեն պատասխանել, թե որ կազմակերպությունն է մարզպետարանի դահլիճը նորոգում: 27 տարի շարունակ պետբյուջեից ընդհանուր միլիոնավոր դրամներ են հատկացվել մարզպետարանի շենքի պահպանության համար. ինչպե՞ս են ծախսվել այդ գումարները, որ սելավաջրերն անարգել մտել եւ ավերել են մարզպետարանի շենքի դահլիճի մանրահատակը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԱՅՑ

# ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԿՈՌՆԻՁՈՐԻ ԱՆՑԱԿԵՏԻՑ

**«Այցիս նպատակն է, որ տեղում հասկանանք՝ արդյոք կազմակերպման ընթացքում որեւէ բաներ կան լրացնելու, ուղղումներ իրականացնելու»,-սեպտեմբերի 29-ին՝ Գորիսում լրագրողների հետ ճեպազրույցին, ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:**

«Հենց առաջին վայրկյանից թե՛ Կոռնիձորում, թե՛ այստեղ կազմակերպվել է առաջին բուժօգնության ծառայություն: Մեր թերապեւտները, մանկաբույժները կիրականացնեն առաջնային կոնսուլտացիա: Ցավոք սրտի, բռնի տեղահանված մեր հայրենակիցները գտնվում են նաեւ բավական ծանր առողջական վիճակում՝ 10 ամիս լինել շրջափակման մեջ, հիմնականում թերսնված, քրոնիկ հիվանդությունների համար դեղորայք չունենալով:

Մեզ համար շատ կարեւոր է հենց առաջին կետին նրանց առաջնակի բուժօգնություն տրամադրել, բայց այս կետից հետո մենք գնահատման արդյունքում հասկանում ենք, որ հոսպիտալացման կարիք կա, շտապօգնության մեքենաները տեղափոխում են արդեն հիվանդանոցային բուժօգնության»,- ասաց Անահիտ Ավանեսյանը:

Նա նշեց, որ անընդհատ հերթափոխով բուժաշխատողները կարողանում են բոլոր կարիք ունեցողներին առաջնակի բուժօգնություն, որոշակի դեղորայք, ցավազրկողներ տրամադրել: «Այստեղ են նաեւ շաքարային դիաբետով պացիենտներ, որոնք ունեն ինսուլինի կարիք: Մենք հենց այստեղ ինսուլինի բաժանման կետ ունենք եւ կարիքի դեպքում տրամադրում ենք առաջիկա օրերի համար»,- հայտնեց նախարարը:

Հանրապետության բուժհաստատություններում բուժում ստացողների թիվը փոփոխվում է: «Դրանք 60-70-ից ավելի են»,- ասաց նա:

Ինչ վերաբերում է Գորիսի ԲԿ-ում գտնվող երեխաներին, ապա նախարարը նշեց, որ այս պահին հոսք կա: «Մի քանի տասնյակ երեխաներ կան, եւ որոնք հետազոտվում են, գնահատվում է վիճակը. եթե հոսպիտալացման կարիք կա, հոսպիտալացնեն, եթե ոչ, ամբուլատոր բուժումը նշանակում են, դեղորայքը տալիս են, եւ արդեն նրանք շարունակում են իրենց ընթացքը դեպի կեցավայր: Ունենք նաեւ մի քանի ծանր վիճակում գտնվող պացիենտներ, ում տեղափոխումը կիրականացնենք Երեւանի ավելի մասնագիտացված կենտրոններ: Գորիսի ԲԿ-ի թիմը 24-ժամյա աշխատանք է իրականացնում»,- ասաց Անահիտ Ավանեսյանը:

Խոսելով դեռեւս Արցախում գտնվող մեր հայրենակիցների մասին՝ նա ասաց. «Այս պահին ավտոբուսների միջոցով կազմակերպվում է մեր այն հայրենակիցների տեղափոխումը, որոնք չունեն տրանսպորտային միջոց կամ խոցելի խմբերից են՝ ծերեր, հաշմանդամներ, եւ նրանց տեղափոխումն այսօր իրականացնում ենք: Տեղափոխումներն ընթացքի մեջ են: Այս պահին սանավիացիայի անհրաժեշտություն չկա»:

Արցախում պայթյունից տուժածների առումով նախարարը նշեց, որ, ընդհանուր առմամբ, 140-ից ավելի պացիենտներ տեղափոխվել էին ԲԿ-ներ միայն այրվածքներով:

«Հիմնական ծանր ընթացքը դեռ շարունակվում է, եւ մենք ունենք ծայրահեղ ծանր վիճակում պացիենտներ. բժիշկները պայքարում են նրանց կյանքը փրկելու համար: Միասնական կերպով մենք ապահովում ենք նրանց հնարավոր բոլոր բուժօգնության համար անհրաժեշտ թե՛ դեղորայքը, թե՛ բժշկական նշանակության ապրանքներ: Բոլորիս միայն մաղթանքն է, որ օր առաջ ապաքինվեն: Գիտեք, որ այրվածքները երկար վերականգնման շրջան են ունենալու: Այդ ամբողջ ընթացքը մենք պլաստիկ վիրաբույժների եւ այլ անհրաժեշտ մասնագետների օգնությամբ ապահովելու ենք»,- ասաց նա:

ԱՐՑԱԽ

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ՝ ԽՆԴԻՐ

Արցախից տեղահանվածներից շատերն ունեն նաեւ ընտանի կենդանիներ, որոնց տեղափոխման հարցը լուրջ խնդիր է դարձել: «Դինգո» թիմի հիմնադիր Օվսաննա Հովսեփյանը, որը զբաղվում է թափառող կենդանիների պաշտպանությամբ, դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, քանի որ Արցախից ընտանի կենդանիներին տեղափոխելու համար լուրջ խոչընդոտներ կային:

Մասնավորապես, Ստեփանակերտի քաղաքապետը թույլ չէր տվել, որ մարդիկ իրենց կենդանիների հետ նստեն Երեւանի քաղաքապետարանի կողմից ուղարկված ավտոբուսները, որոնցով կենդանի տեղափոխելը թույլատրված է եղել: Այդ մասով Երեւանի քաղաքապետարանը նույնպես հանդես եկավ հայտարարությամբ, որ բնակիչները կարող են իրենց հետ վերցնել իրենց կենդանիներին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Դինգո» թիմի հիմնադիրը պատմեց, որ կապ է հաստատել Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանի հետ, որը հերքել է, թե ինքը նման բան է ասել, եւ ավելին՝ հիմա իր շունը ծնողների հետ նստում է ավտոբուս:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Ստեփանակերտի քաղաքապետի հետ՝ հասկանալու համար, թե ինչը կարող է խոչընդոտ կամ պատճառ հանդիսանալ, որպեսզի չթողնեն մարդկանց իրենց կենդանիների հետ հեռանալ կորցրած հայրենիքից, սակայն կապի բացակայության պատճառով հնարավոր չեղավ կապ հաստատել քաղաքապետի հետ:

## ԱԼԻԵՎԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ Է

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Ադրբեջանի Հանրապետությունում երեկ տեղի է ունեցել 2-րդ ազգային քաղաքաշինական ֆորումը, որին ներկա են եղել գրեթե 200 օտարերկրյա հյուրեր 53 երկրներից:

Իլհամ Ալիեւը հանդիպման ժամանակ ասել է. «Սա մեր բարեկամության եւ մեր ընդհանուր շահի արտացոլումն է՝ օկուպացիայի ժամանակ ամբողջությամբ ավերված տարածքները վերականգնված տեսնելու»:

Պետության ղեկավարն ընդգծել է, որ Ադրբեջանը վերակառուցում է քաղաքները, իսկ գյուղերը զրոյից է ստեղծում: «Հետեւաբար, մենք պետք է օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաները եւ ստեղծենք լավագույն պայմանները նախկին փախստականների համար, որոնք արդեն վերադարձել են»,- հավելել է նախագահ Իլհամ Ալիեւը:

Նախագահ Իլհամ Ալիեւը նշել է նաեւ, որ այսօր Արեւելյան Զանգեզուրը վերակառուցվում է զրոյից, ինչպես ամբողջ Ղարաբաղը:

«Մենք Զանգիլանը դիտարկում ենք որպես կարեւոր տրանսպորտային կետ՝ իր աշխարհագրական դիրքով, եւ այն պատճառով, որ այն գտնվում է տրանսպորտային միջանցքներում»:

Ընդհանուր առմամբ, արդեն հաստատվել են ութ քաղաքների եւ ինսնսուներկու գյուղերի գլխավոր հատակագծերը: Ընդգծելով, որ առաջիկա տարիներին կսկսվեն բնակարանաշինության լայնածավալ աշխատանքներ, այդ թվում՝ Շուշի քաղաքում եւ այլ քաղաքներում, երկրի ղեկավարը նշել է, որ դա ծրագրի մի մասն է:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 2 մարդ զոհել է, 31-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՏԱՊ

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 19-ին՝ Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ագրեսիայից հետո, շարունակվում է արցախահայերի բռնի տեղահանումը: Սեպտեմբերի 29-ին՝ ժամը 06:00 դրությամբ, ԼՂ-ից Հայաստան մուտք է գործել բռնի տեղահանված 84 770 անձ:

Բռնի տեղահանված արցախցիները հաշվառում անցնելուց հետո, ըստ ցանկության, օգտվում են կառավարության տրամադրած աջակցությունից: Նրանք, ովքեր չունեն կեցության նախապես որոշված վայր, կառավարությունն ապահովում է համապատասխան կեցավայրով:

Սեպտեմբերի 28-ին ներկայացված տեղեկության համաձայն՝ 17 հազար 153 անձ օգտվել է Հայաստանի կառավարության կողմից տրամադրված կեցավայրերից: Արագածոտնի մարզում տեղաբաշխվել է 988 անձ, Արարատի մարզում՝ 3 հազար 665 անձ, Արմավիրի մարզում՝ 1231, Գեղարքունիքի մարզում՝ 1542, Լոռու մարզում՝ 663, Կոտայքի մարզում՝ 4 հազար 156, Շիրակի մարզում՝ 783, Սյունիքի մարզում՝ 1958, Վայոց ձորի մարզում՝ 1070 անձ, Տավուշի մարզում՝ 797 անձ:

Աջակցության կարիքների նպատակով հաշվառումը շարունակվում է:

Նիկոլ Փաշինյանը հայտարարեց նաեւ, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին ՀՀ բյուջեից կհատկացվի միանվագ 100-հազարական դրամ:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ՝ ԴՈՒԲԼԻՆՈՒՄ

Դուբլինում Եվրոպայի խորհրդի խորհրդարանների նախագահների եվրոպական համաժողովի ընթացող նիստի ժամանակ մի խումբ հայ եւ իռլանդացի երիտասարդներ Թուրքիայի եւ Ադրբեջանի դեմ ուղղված բողոքի ակցիա են իրականացրել:

Նրանք հանդես են եկել «Ամոթ Ադրբեջանին», «Թուրքիան եւ Ադրբեջանը ցեղասպան են», «Կանգնեցրե՛ք ցեղասպանությունը», «Մենք Լեռնային Ղարաբաղի հայերի կողքին ենք» վանկարկումներով:

Երիտասարդները տեւական ժամանակ մնացել են այնտեղ, համաժողովին մասնակցող պատվիրակներից շատերը դուրս են եկել նիստից եւ հեռվից լուսանկարել նրանց:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իջել եւ զրուցել է երիտասարդների հետ. նրանք ընդգծել են, որ Հայաստանի կառավարության, Լեռնային Ղարաբաղի բնակչության կողքին են:

Երիտասարդներն իրենց զորակցությունն են հայտնել բռնի տարհանվող մեր հայրենակիցներին՝նշելով, որ ցանկանում են գրավել միջազգային հանրությունը ներկայացնող խորհրդարանների նախագահների ուշադրությունը:

ԲՈՂՈՔ

# ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԸ ԿԴԻՄԵՆ ԱԱԾ

**Սեպտեմբեր ամիս մուտք գործեցինք մի շարք հայ տնտեսվարողների ակտիվ բողոքի ակցիաներով:**

«Stop Wildberiies Armenia» նախաձեռնության անդամները բողոքի ակցիա էին իրականացնում կառավարության շենքի մոտ: Նրանց պահանջը հետեւյալն էր՝ Հայաստանում արգելել «Wildberiies» եւ «Ozon» առցանց խանութներից էժան պատվիրված ապրանքների վաճառքը: Բողոքի ակցիան ընդհատվեց, եւ կողմերն էլ լռեցին, քանի որ «Wildberiies»-ը խոստացել էր լուծել տեխնիկական այդ խնդիրը: Խնդիրը ինչ-որ չափով լուծվեց, սակայն առաջ եկան նոր հանգամանքներ, ավելի ճիշտ՝ նոր տարբերակներ, որն էլ կրկին բողոքի ալիք բարձրացրեց տնտեսվարողների մոտ, բայց երկրում տիրող քաոսային իրավիճակից ելնելով՝ որեւէ քայլի ներկա պահին չեն դիմի տնտեսվարողները:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Stop Wildberiies Arշenia» նախաձեռնության անդամ, տնտեսվարող Արման Թումասյանի հետ, որը նշեց.

«Ներկա իրավիճակից ելնելով՝ մենք ամեն բան դադարեցրել ենք, բայց խնդիրը չի լուծվել: Ռուսական տարբերակով, այո՛, ալեւս հնարավոր չի լինում պատվիրել, բայց ներկա պահին նոր խարդախություն կա, որն էլ ակտիվ տարածում են շատ հայտնի հայ բլոգերներ: Մենք դիմելու ենք Ազգային անվտանգության տնտեսական հանցագործությունների բաժին:

Հայց ենք ներկայացնելու, որ Հայաստանում կան մոտ 7-ից 8 հոգի բլոգերներ եւ «Ինստագրամ»-ում, եւ «Ֆեյսբուք»-ում, որոնք ակտիվ տարածում են այդ խարդախությունը: Այստեղ կա 2 տարբերակ՝ կամ դու պետք է շատ լավ ծրագրավորող լինես, որ կարողանաս նման տարբերակներ գտնես ու տարածես, կամ էլ համագործակցություն կա «Wildberiies»-ի որոշ կառույցների հետ, եւ երկու տարբերակում էլ դա համարվում է տնտեսական հանցագործություն:

Տնտեսվարողի խոսքով՝ եթե դա չհամարվեր տնտեսական հանցագործություն, ապա «Wildberiies»-ը ինչո՞ւ պետք է ուղղեր տեխնիկական այդ սխալը եւ փակեր բոլոր հնարավոր տարբերակները, որ այլընտրանքային եւ զարտուղի ճանապարհներով վաճառքներ չիրականացվեն:

«Մենք չենք բողոքում ոչ մի օնլայն հարթակի դեմ. մենք էլ ենք օգտվում, կլինի դա «Wildberiies», թե «Ozon», մեր պայքարը այս կառույցների դեմ չէ: «Wildberiies»-ը այդ տեխնիկական խարդախությամբ մեր ամբողջ սեզոնային առեւտուրը ոչնչացրեց: Տեխնիկական խնդիրը երբ լուծվեց, 15-20 տոկոսով առեւտուրը տնտեսվարողների մոտ կարգավորվեց, իսկ հիմա այդ այլընտրանքային ձեւերը, որոնք ակտիվ տարածում են բլոգերները, վնասում են մեր պետությանը: Ներկա պահին էլ այդ խարդախությունը անում են, «VPN» տարբերակով մտնում են, ինչ պետք է պատվիրում են, անջատում են, հասցե են փոխում, ու էլի նույն իրավիճակը. դա ոչնչացնում է մեր շուկան: Մեզ մի բան է հետաքրքրում. այդ տարբերակները «Wildberiies»-ն է տրամադրում, թե ոչ, որովհետեւ նման տարբերակներ գտնելու համար դու լուրջ ծրագրավորող պետք է լինես: Ով ասաց, որ եթե ես կոշիկը բերեմ 4000 դրամով, պիտի վաճառեմ 12000. չկա նման բան, մենք էլ ենք այդ օնլայն կայքերից օգտվում եւ բացարձակ դեմ չենք: Մեր խնդիրն այն է, որ լինեն հավասար մրցակցության պայմաններ»:

Պարոն Թումասյանի հետ խոսեցինք նաեւ բնակիչների դժգոհություններից՝ կապված սպասարկման հետ, մարդիկ դժգոհում եւ բողոքում են, որ, դեռ խանութ չմտած, ուզում են դուրս գալ.

«Դա կուլտուրայի հարց է: Եթե պետք է իմ ենթակայության տակ աշխատի ծանոթ կամ բարեկամ եւ բարեհամբյուր չկարողանա սպասարկել, նախ դա վանում է հաճախորդին, հետո նաեւ մեծ վնաս է հասցնում ինձ , եւ նման աշխատողներից ես կազատվեմ, որովհետեւ մարդկանց երկրորդ անգամ խանութ է բերում ոչ թե քո ապրանքը, այլ քո ջերմ սպասարկումը»:

Պարոն Թումասյանը նաեւ հավելեց, որ մոտ ապագայում հնարավոր է անգամ վաճառողների սպասարկման հետ կապված վերապատրաստման հարց լինի, քանի որ մեր առաջ պետք է ունենանք եվրոպական երկրների օրինակը, որով էլ կխթանենք մեր պետության զարգացմանը:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ՊԵՍԿՈՎԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման հարցը մնում է արդիական»,- լրագրողների հետ զրույցում ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: Բացի այդ, նրա խոսքով, ծրագրեր կան տարածաշրջանում զարգացնելու տրանսպորտային հաղորդակցությունն ու նյութատեխնիկական ապահովումը:

«Սա չափազանց կարեւոր է Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի համար: Մենք հուսով ենք, որ այդ աշխատանքը կշարունակվի»,- ասել է Պեսկովը:

Ինչ վերաբերում է ռուս խաղաղապահների հետագա աշխատանքին, ապա Կրեմլի ներկայացուցիչն ասաց, որ նրանց աշխատանքը քննարկման առարկա է դառնալու ադրբեջանական կողմի հետ:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Լեռնային Ղարաբաղի ղեկավար Սամվել Շահրամանյանը հրամանագիր է ստորագրել պետական բոլոր կառույցները մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը լուծարելու մասին:

Հրամանագիրն ընդունվել է «ներկայիս ծանր ռազմաքաղաքական իրավիճակի առնչությամբ՝ ելնելով առաջնահերթությունից՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ֆիզիկական անվտանգության եւ կենսական շահերի ապահովումը»:

*Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## «ՅՈՒՆԻՍԵՖ»-Ի ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Ավելի քան 88,000 մարդ Լեռնային Ղարաբաղից մուտք է գործել Հայաստան, եւ ընդհանուր թիվը կարող է հասնել 120,000-ի»,- ուրբաթ օրը ՄԱԿ-ի ճեպազրույցում ասաց ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Կավիտա Բելանին: Նրա խոսքով՝ հոգնած ու վախեցած մարդկանց հսկայական ամբոխներ են հավաքվում գրանցման կենտրոններում:

«Նրանք ինն ամիս շրջափակման մեջ են ապրել, - ասաց նա:- Նրանք անհանգիստ են, վախեցած եւ պատասխաններ են ուզում»: «Մենք պատրաստ ենք ընդունել մինչեւ 120 հազար մարդ: Դժվար է կանխատեսել, թե քանիսը կժամանեն այս փուլում»,- հավելեց նա՝ պատասխանելով փախստականների թվի մասին հարցին: «Նախնական գնահատականները հիմնված էին 70,000-ից 90,000 փախստականների վրա, բայց դրանք պետք է թարմացվեն»,- ավելացրեց նա:

«Փախստականների գրեթե մեկ երրորդը երեխաներ են»,- ճեպազրույցում ասել է ՄԱԿ-ի մեկ այլ պաշտոնյա: «Մեզ ամենաշատն անհանգստացնում է այն, որ նրանցից շատերը բաժանվել են իրենց ընտանիքներից», - ասաց «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի տարածաշրջանային տնօրեն Ռեգինա Դե Դոմինիսիսը:

Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի խոսնակ Հիշամ Դիաբն ասաց, որ փախստականների հոգեկան առողջությանն աջակցելու հսկայական կարիք կա: «Իրավիճակը հաճախ ներառում է ընտանիքներ, որոնք գալիս են երեխաներով, որոնք այնքան թուլացած են, որ նրանք ուշաթափվում են իրենց ծնողների գրկում», - ասաց նա:

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի օպերատիվ մենեջեր Կառլոս Մորացանին ասաց, որ հինգշաբթի օրը Ղարաբաղից վառելիքի պահեստի պայթյունի եւ վերջին մարտերի զոհերի մոտ 200 դի է հանվել:

«Մենք նախատեսում էինք, որ տարհանումն ավելի երկար գործընթաց լինի,- ասաց նա:- Այս շաբաթ տարհանումը շատ արագ անցավ»:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ԿԱՐԾԻՔ

ՃՆՇՈՒՄՆԵՐ

# ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

**Ադրբեջանի մի շարք քաղաքացիներ քննադատել են սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից իրականացրած «հակաահաբեկչական գործողությունները», որի հետեւանքով մահացել են երեխաներ:**

Նրանց քննադատությունը տեղի իշխանություններին զայրացրել է, ինչի հետեւանքով նրանք հայտնվել են իրավապահների ուշադրության կենտրոնում եւ կալանավորվել:

Բլոգեր եւ լրագրող Նուրլան Գահրամանլին օնլայն քննադատել է Ադրբեջանի ռազմական հարձակումը: Սեպտեմբերի 20-ին նրան բերման են ենթարկել իր տնից եւ բանտարկել 1 ամսով ապօրինի տեղեկություններ տարածելու համար: Լրագրողը դատարանում պնդել է, որ իրեն ոստիկանությունում ծեծել են ու սպառնացել:

Նախկին դիվանագետ Էմին Իբրահիմովը սեպտեմբերի 20-ին իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է. «Ղարաբաղում Ադրբեջանի գործողությունները սպասարկում են Ռուսաստանին»: Նա նույնպես 1 ամսով բանտարկվել է:

Հակապատերազմական ակտիվիստ Նեմեթ Աբբասովը կրկին ֆեյսբուքյան էջում գրել է՝ «Էթնիկ հայերի զտում»: Մեկ օր անց ձերբակալվել է: Նեմեթ Աբբասովին 1 ամսով կալանավորել են:

Սեպտեմբերի 20-ին ձերբակալվել է արհմիության առաջնորդ եւ հակապատերազմական ակտիվիստ Աֆիադին Մամմադովը: Նա նույնպես քննադատել է Ադրբեջանի կողմից իրականացրած հակաահաբեկչական գործողությունները, որի արդյունքում շատ երեխաներ են մահացել: Մամմադովի տունը շրջապատել են ձերբակալելու նպատակով եւ բռնություն կիրառել. պաշտպանվելու նպատակով նա դանակահարել է իրավապահներից մեկին: Նրան կալանավորել են 5 տարի ժամկետով:

30-օրյա ժամկետով ձերբակալվել է եւ կալանավորվել ժողովրդավարական ակտիվիստ Ամրահ Թահմազովը դատապարտող գրառման համար:

Նա ֆեյսբուքյան իր էջում գրել էր. «Ադրբեջանի ագրեսիան եւ անմեղ երեխաների մահը»:

Ադրբեջանի իշխանությունները կոչ են արել զգուշանալ նման հակապետական ու հակառազմական ակտիվիստներից: Նաեւ նշել են, որ ցանկացած ապօրինի գրառման հեղինակ պատասխանատվության կենթարկվի:

Հավելենք նաեւ, որ նախքան սեպտեմբերի 19-ի՝ Ադրբեջանի կողմից իրականացրած «հակաահաբեկչական գործողություններ»-ը, որի հետեւանքով մահացել են երեխաներ, Ադրբեջանի իրավապահները Ղազախի շրջանում ձերբակալել էին մի խումբ ընդդիմադիր ակտիվիստների:

«Թուրան» գործակալության տվյալներով՝ Ժողովրդական ճակատի ներկայացուցիչները բերման են ենթարկվել նախկինում Հայաստանում բնակված ադրբեջանցիների հետ հարցազրույցի պատճառով:

Լրատվամիջոցի փոխանցմամբ՝ ձերբակալված երեք ակտիվիստներից մեկն ազատ է արձակվել, երկրորդին մեղադրանքն է առաջադրվել ոստիկանին չենթարկվելու հոդվածով, երրորդ ակտիվիստը՝ Ֆարիդ Ալիեւը, շարունակում է մնալ ոստիկանության շրջանային վարչությունում: Ըստ «Թուրան»-ի աղբյուրների՝ նրա դեմ թմրանյութերի հետ կապված գործ է նախապատրաստվում:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՍՊՈՐՏ

## ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է

Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ, «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը սոցցանցերի իր էջերում անդրադարձել է Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի՝ Ադրբեջանի սահմանապահների կողմից ձերբակալմանը:

«Ես միանում եմ իմ հայրենակիցներին՝ պահանջելով անվտանգ ազատ արձակել Ռուբեն Վարդանյանին եւ Ադրբեջանում կալանավորված մյուս բոլոր հայերին: Քանի որ տասնյակ հազարավոր ընտանիքներ փախչում են Լեռնային Ղարաբաղից՝ անվտանգ ապաստան ստանալու Հայաստանում, կալանավորումը դառնում է տագնապալի միտում:

Ռուբեն Վարդանյանն աչքի է ընկնում որպես խաղաղության բացահայտ ջատագով ոչ միայն մեր տարածաշրջանում, այլեւ աշխարհում: Նա աշխարհահռչակ բարերար է, գործարար եւ «Ավրորա» մրցանակի մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրը, որը խաղաղության տարածման ջատագով է եւ ամբողջ աշխարհի մարդկանց տրամադրում է կրթություն եւ առողջապահություն»,- գրել է Մխիթարյանը:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ՇԱԽՄԱՏՈՒՄ

Մեխիկոյում անցկացվող շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնության 8-րդ տուրում Հայաստանի ներկայացուցիչ Մամիկոն Ղարիբյանը սպիտակ ֆիգուրներով ոչ-ոքի խաղաց Հունգարիան ներկայացնող Գլեբ Դուդինի հետ եւ 6 միավորով բաժանում է 4-10-րդ տեղերը:

Առաջատարներն են 6,5-ական միավոր վաստակած ֆրանսիացի Մաուրիցին, կոլումբացի Ավիլա Պավասը եւ Դուդինը:

Կանանց առաջնությունում Մարիամ Մկրտչյանը սպիտակներով պարտության մատնեց Կանադայի ներկայացուցիչ Սվիտլանա Դեմչենկոյին եւ 6 միավորով բաժանում է 4-6-րդ տեղերը:

Միանձնյա առաջատարը ամերիկացի Կարիսա Յիպն է՝ 7 միավոր: Բուլղարացի Բելոսլավա Կրաստեւան եւ կուբացի Ռոքսանգել Օբրեգոն Գարսիան ունեն 6,5-ական միավոր:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Ասյա Եդիգարյանը 8-րդ տուրում սեւ ֆիգուրներով պարտվեց ռուսաստանցի Տատյանա Գետմանին եւ 4 միավորով բաժանում է 35-48-րդ տեղերը:

Հայաստանը ներկայացված է երեք շախմատիստներով:

Առաջնության ավարտին մնացել է երեք տուր:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

## Women's club–ը՝ ԱՄՆ–ում

Women's club-ի անձնակազմն այս օրերին գտնվում է ԱՄՆ-ում: Նախատեսված ներկայացումը չեղարկվել է: Դերասաններն էլ ունեն հստակ ժամանակացույց հետ գալու համար, ինքնաթիռի տոմսերն արդեն գնված են եւ փոփոխության ենթակա չեն:

Նշենք, որ Women's club-ի ո՛չ ղեկավար կազմը, ո՛չ դերասանները հանդես չեն եկել որեւէ հրապարակմամբ կամ հայտարարությամբ, սակայն իրավիճակով պայմանավորված՝ նախատեսված ներկայացումը չի կայացել: Ամերիկայի մեր հայրենակիցներն էլ մտահոգ են, թե ինչ ճակատագիր են ունենալու գնված տոմսերը:

Նշենք, որ ԱՄՆ-ում է նաեւ դերասանուհի Տոմա Պետրոսյանը, որը ծնունդով Արցախից է:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Տոմայի հետ՝ պարզելու համար, թե երբ են պատրաստվում վերադառնալ, եւ ինչ վիճակում են իր հարազատները, որոնք Արցախում էին, սակայն որեւէ արձագանք չստացանք:

## ՀԱՄԵՐԳԸ ԿԿԱՅԱՆԱ՞

Հուլիսի վերջին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը գրառում էր կատարել ֆեյսբուքյան իր էջում, որը դարձել էր մեծ քննարկումների թեմա: Մասնավորապես, ասվում էր, որ Հայաստան է գալիս համաշխարհային մեծ աստղերից մեկը:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ այդ աստղը, ո՛չ ավել, ո՛չ պակաս, Քելվին Քորդոզար Բրոդուս Կրտսերը կամ բոլորիս հայտնի Սնուփ Դոգգն է: Օրեր անց պետբյուջեից 6 միլիոն դոլար հատկացվեց սեպտեմբերի 23-ին «Հրազդան» մարզադաշտում կայանալիք՝ 25.000 հոգու համար նախատեսված համերգի իրականացման համար:

Նախատեսված համերգից օրեր առաջ՝ սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանը սանձազերծեց հերթական անմարդկային գործողություններն Արցախի ու արցախցու դեմ: Արցախահայությունը ստիպված էր բռնի կերպով լքել իր հայրենիքը, ավելի ուշ էլ՝ սեպտեմբերի 28-ին, Սամվել Շահրամանյանը ստորագրեց մի փաստաթղթի տակ, համաձայն որի՝ Արցախի հանրապետությունը հունվարի 1-ից այլեւս գոյություն չի ունենա:

Այս ամենի ֆոնին անհանգստության ու մտահոգության ալիք էր բարձրացրել Սնուփ Դոգի երեւանյան համերգը: Մարդիկ պահանջում էին չեղարկել այն: Համերգը կազմակերպող ընկերությունը՝ «Դոպինգ Սփեյս»-ը, հանդես եկավ հայտարարությամբ, որից պարզ դարձավ, որ համերգը հետաձգվում է անորոշ ժամկետով:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Դոպինգ» գովազդային գործակալության հիմնադիր Հայկ Սիմոնյանի հետ՝ պարզելու, թե արդյոք կա հստակեցում այս մասով.

«Առաջիկայում հանդես կգանք հայտարարությամբ: Այս պահին ասել չեմ կարող, թե ինչքան ժամանակով է հետաձգվել»:

Հարցին, թե արդյոք հնարավոր է կայացման տեղը փոխվի, քանի որ գնալով եղանակը ցրտում է, իսկ «Հրազդան» մարզադաշտը բաց տարածք է, Սիմոնյանը նշեց, որ, ամենայն հավանականությամբ, չի փոխվի:

*ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ*

● *Հոկտեմբերի 1-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ինչպես են դարզաբանում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների ծառայողական բնությունները:**

*Լուսինե Սարիբեկյան (28 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Կազմակերպությունում մասնագիտական հիվանդությունների եւ դժբախտ դեպքերի պատճառները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն: Մասնագիտական հիվանդությունները եւ դժբախտ դեպքերը ենթակա են պարտադիր հաշվառման գործատուի կողմից: Մասնագիտական հիվանդությունների եւ դժբախտ դեպքերի հաշվառման եւ ծառայողական քննության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Տուժողը կամ նրա ներկայացուցիչը սահմանված կարգով կարող է մասնակցել աշխատանքի ժամանակ դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննությանը, իրավունք ունի ծանոթանալու դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննության նյութերին, ստանալ դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննության ակտը, իսկ ակտին համաձայն չլինելու դեպքում ծառայողական քննության արդյունքները կարող են բողոքարկել վարչական եւ (կամ) դատական կարգով:

*Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ինչո՞ւ ներկայացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության ծանուցում:**

*Հայաստան Մինասյան (59 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

«Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաեւ ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է՝

- իրավաբանական անձինք՝ 50.000 ՀՀ դրամ,
- ֆիզիկական անձինք՝ 10.000 ՀՀ դրամ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Բեյրութում բողոքի ակցիա է եղել՝ի պաշտպանություն արցախցիների: Նրանք պահանջում են հարգել արցախցիների իրավունքները:

Նրանք վառել են Ադրբեջանի դրոշը, քարեր նետել Ադրբեջանի դեսպանատան դիմաց: Ոստիկանները արցունքաբեր գազ են կիրառել եւ ցրել ակցիան:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 4 + 8<br>+17 + 23 |
| Կոտայքի լեռներ | + 5 + 7<br>+15 + 19 |
| Կոտայքի նախալեռներ | + 11 + 12<br>+21 + 24 |
| Գեղարքունիք | + 4 + 9<br>+15 + 19 |
| Լոռի | + 5 + 10<br>+14 + 19 |
| Տավուշ | + 8 + 13<br>+16 + 21 |
| Արագածոտնի լեռներ | + 4 + 7<br>+14 + 18 |
| Արագածոտնի նախալեռներ | + 10 + 13<br>+ 20 + 25 |

| | |
|---|---|
| Արարատ | + 12 + 15<br>+24 + 27 |
| Արմավիր | + 9 + 12<br>+25 + 27 |
| Վայոց ձորի լեռներ | + 6 + 9<br>+12 + 15 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 12 + 15<br>+25 + 27 |
| Սյունիքի հովիտներ | + 13 + 16<br>+21 + 24 |
| Սյունիքի նախալեռներ | + 7 + 10<br>+15 + 17 |
| ԼՂՀ | + 12 + 15<br>+21 + 25 |
| Երեւան | + 19 + 21<br>+26 + 28 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*